# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«22» հունվարի 2024 թվականի №129-Ա

### ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Վ. ՏԵՐՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 183,0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-1001-0002) ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387 Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը, հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաքի Վ. Տերյան փողոցի հարևանությամբ գտնվող 183,0 քառակուսի մետր մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-1001-0002) տրամադրել հասցե՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Վ. Տերյան փողոց, 78/1 հողամաս**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«22» հունվարի 2024 թվականի № 128Ա

**ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ՎԱՐԱԶԴԱՏ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, Գ. ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ ԿՈՄԲԻՆԱՏ ԹԱՂԱՄԱՍ 1-ԻՆ ՓՈՂՈՑ 4 ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ԵՎ ՏՆԱՄԵՐՁ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ (ՎԿԱՅԱԿԱՆ № 1395844) ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Վարազդատ Պետրոսյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №137951 թվագրմամբ)՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Ժառանգության իրավունքով քաղաքացի Վարազդատ Պետրոսյանին պատկանող Շիրակի մարզ, գ. Ղարիբջանյան Կոմբինատ թաղամաս 1-ին փողոց 4 բնակելի տուն և տնամերձ հասցեագրությամբ անշարժ գույքը (վկայական № 1395844) վերահասցեավորել՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Մսի կոմբինատ թաղամասի 5-րդ շարք, 15/3 բնակելի տուն**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ — Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


## ՈՐՈՇՈՒՄ

«22» հունվարի 2024 թվականի №127-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ԹԲԻԼԻՍՅԱՆ ԽՃՈՒՂԻ, 5-ՐԴ ԱՆՑՈՒՂՈՒ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 1418,27 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՈՒ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ 218,86 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդհոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Գյումրի համայնքի ղեկավարի 2024 թվականի հունվարի 16-ի №50–Ա որոշումը, հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաք, Թբիլիսյան խճուղի, 5-րդ անցուղու հարևանությամբ գտնվող 1418,27 քառակուսի մետր մակերեսով հողամասին և դրա վրա ինքնակամ կառուցված ու օրինական ճանաչված 218,86 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տանը տրամադրել հասցե՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Թբիլիսյան խճուղի, 5-րդ անցուղի, 10/1 բնակելի տուն**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00, Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«22» հունվարի 2024 թվականի №126-Ա

## ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ՀՆՈՑԱՎԱՆԻ 3-ՐԴ ՇԱՐՔ 2 (ՎԿԱՅԱԿԱՆ №09022023-08-0046) ԵՎ ՀՆՈՑԱՎԱՆԻ 3-ՐԴ ՇԱՐՔ 2/1 (ՎԿԱՅԱԿԱՆ №2838070) ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՆՈՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Արմեն Պետրոսյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №863 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

Գյումրի քաղաք, Հնոցավանի 3-րդ շարք 2 (վկայական №09022023-08-0046) և Հնոցավանի 3-րդ շարք 2/1 (վկայական №2838070) բնակելի տների միավորումից առաջացած անշարժ գույքը հասցեավորել՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Հնոցավանի 3-րդ շարք, 2 բնակելի տուն**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024 թ. ք. Գյումրի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«22» հունվարի 2024 թվականի №125-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 22–Ի №420-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդհոդվածի 1-ին մասի 24-րդկետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33–րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի փետրվարի 22–ի «Գյումրի ք. Մարմաշենի խճուղու հարեվանությամբ գտնվող 531.79 քմ մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-0122-0007) համայնքի գույք գրանցելու նպատակով հացե տրամադրելու մասին» №420-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

1. վերնագրում և որոշման կայացման մեջ «531.79» թիվը փոխարինել «602.02» թվով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«22» հունվարի 2024 թվականի № 124-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Ա. ՍԱՎՈՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 581,35 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՈՒ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ 396,31 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Գյումրի համայնքի ղեկավարի 2024 թվականի հունվարի 16-ի №52–Ա որոշումը, հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաքի Ա. Սավոյան փողոցի հարևանությամբ գտնվող 581,35 քառակուսի մետր մակերեսով հողամասին և դրա վրա ինքնակամ կառուցված ու օրինական ճանաչված 396,31 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տանը տրամադրել հասցե՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Ա. Սավոյան փողոց, 9/7 բնակելի տուն**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«22» հունվարի 2024 թվականի № 123-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, Ա. ՍԱՎՈՅԱՆ ՓՈՂՈՑ, 23/6 ՀԱՍՑԵԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ 154,35 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՈՒ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ 64,17 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Գյումրի համայնքի ղեկավարի 2024 թվականի հունվարի 12-ի №45–Ա որոշումը, հողամասի հատակագիծը, տեղադիրքի սխեման՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաք, Ա. Սավոյան փողոց, 23/6 հասցեի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 154,35 քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասին և դրա վրա ինքնակամ կառուցված ու օրինական ճանաչված 64,17 քառակուսի մետր արտաքին մակերեսով օժանդակ շինությանը տրամադրել հասցե՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Ա. Սավոյան փողոց, 2 շինություն**

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«22» հունվարի 2024 թվականի №122-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 05-Ի №2464-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի №3325-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 37-րդ հոդվածի 1-ին մասով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի հոկտեմբերի 05-ի «Գյումրի քաղաքի Օզանյան փողոցի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 257,1 քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասին և դրա վրա ինքնակամ կառուցված ու օրինական ճանաչված 257,1 քառակուսի մետր արտաքին մակերեսով ավտոտնակին համայնքի գույք գրանցելու նպատակով հասցե տրամադրելու մասին» №2464-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝
   1) վերնագրում և որոշման կայացման մեջ բոլոր տեղերում «257,1» թիվը փոխարինել «252,83» թվով,
   2) նախաբանում «սեպտեմբերի 28-ի №5417-Ա որոշումը» բառերը և թվերը փոխարինել «սեպտեմբերի 28-ի №2417-Ա և հոկտեմբերի 12-ի №3234-Ա որոշումները» բառերով և թվերով:
2. Ուժը կորցրած համարել Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի հոկտեմբերի 05-ի №2464-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» №3325-Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


## ՈՐՈՇՈՒՄ

«22» հունվարի 2024 թվականի №121-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԻ ՓՈՂՈՑ, 46Բ ՀՈՂԱՄԱՍ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ (ՎԿԱՅԱԿԱՆ №2027548) ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Հայկ Նիկողոսյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №696 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

Գյումրի քաղաք, Խրիմյան Հայրիկի փողոց, 46բ հողամաս հասցեագրությամբ անշարժ գույքը (վկայական №2027548) վերահասցեավորել՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Խրիմյան Հայրիկի փողոց, 44/3 հողամաս**

22.01.2024

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«22» հունվարի 2024 թվականի № 120-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՓՈՂՈՑ, 172Ա ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ (ՎԿԱՅԱԿԱՆ №2007250) ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Սմբատ Մարտիրոսյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №804 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաք, Մյասնիկյան փողոց, 172ա բնակելի տուն հասցեագրությամբ անշարժ գույքը (վկայական №2007250) վերահասցեավորել՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Ա. Մյասնիկյան փողոց, 172/2 բնակելի տուն**

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

«22» հունվարի 2024 թվականի N 119-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 26-րդ կետով, 6-րդ կետի 1-ին ենթակետի <<դ>> պարբերությամբ, 7-րդ կետի 1-ին ենթակետի <<գ>> պարբերությամբ, 8-րդ կետի 3-րդ ենթակետով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ>> համայնքային կառավարչական հիմնարկի կարիքների համար էլեկտրոնային աճուրդի միջոցով գրենական պիտույքների և տնտեսական ապրանքների ձեռքբերման նպատակով կազմավորել հայտերը գնահատող հանձնաժողով հետևյալ կազմով՝

Հանձնաժողովի նախագահ՝

1) Մենուա Մկրտչյան – համայնքի ղեկավարի խորհրդական,

Հանձնաժողովի անդամներ՝

2) Լևոն Բարսեղյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետի պաշտոնակատար

3) Խաչատուր Սուքիասյան - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի գլխավոր մասնագետ

4) Մանե Վարդանյան - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ,

5) Օլգա Գևորգյան - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ,

Հանձնաժողովի քարտուղար՝

6) Արմինե Սարգսյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առաջին կետում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**2024թ. ք. Գյումրի** **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am


## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«22» հունվարի 2024 թվականի N 118-Ա

**ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԱՆՆԻԿ ԽԱՉԱՏՈՒՐԻ ՇԱԼՅԱՊԻՆԱՅԻՆ 2/4 ՄԱՍ , ՍԵՄՅՈՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ ՇԱԼՅԱՊԻՆԻՆ 1/4 ՄԱՍ ԵՎ ԽԱՉԱՏՈՒՐ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ ՇԱԼՅԱՊԻՆԻՆ 1/4 ՄԱՍ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՀՆՈՑԱՎԱՆ 2-ՐԴ ՇԱՐՔ N 35 ՀԱՍՑԵԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 32,65 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 212,14 ՔԱՌ.Մ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ԱՌԿԱ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ**

Քաղաքացիներ Աննիկ Խաչատուրի Շալյապինային 2/4 մաս, Սեմյոն Ալեքսանդրի Շալյապինին 1/4մաս և Խաչատուր Ալեքսանդրի Շալյապինին 1/4 մաս ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Հնոցավան 2-րդ շարք N 35 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված է 32,65 (երեսուներկու ամբողջ վաթսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններ և օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 212,14 (երկու հարյուր տասներկու ամբողջ տասնչորս հարյուրերորդական) քառ.մ մակերեսով հողամաս, որի վրա առկա շինությունները կառուցված են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը:

Քաղաքացի Աննիկ Շալյապինան դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ նշված հողամասի և շինությունների նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ շինությունները չի գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, ղեկավարվելով <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքով 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով ( և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22. 1 կետի հիմք ընդունելով քաղաքացի Աննիկ Շալյապինայի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվ հունիսի 30-ին N 13798 թվագրմամբ )՝կադաստրի կոմիտեում հաշվառված 2023MKYPLF և 2023KS4PY9 ծածկագրերով

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Ճանաչել քաղաքացիներ Աննիկ Խաչատուրի Շալյապինայի ծնված (00▨00▨1944) 2/4 մաս, Սեմյոն Ալեքսանդրի Շալյապինի ծնված (03▨08▨1984) 1/4մաս և Խաչատուր Ալեքսանդրի Շալյապինի ծնված (13.12.1985) 1/4 մաս ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Հնոցավան 2-րդ շարք N 35 հասցեի հասցեի տան կառուցապատման և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվող) 212,14(երկու հարյուր տասներկու ամբողջ տասնչորս հարյուրերորդական) քառ.մ մակերեսով հողամասի և նրա վրա առկա շինությունների նկատմամբ:

2. Քաղաքացիներ Աննիկ Խաչատուրի Շալապինային 2/4 մաս, Սեմյոն Ալեքսանդրի Շալապինին 1/4մաս և Խաչատուր Ալեքսանդրի Շալապինին 1/4 մաս ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Հնոցավան 2-րդ շարք N 35 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 32,65 (երեսուներկու ամբողջ վաթսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները ճանաչել օրինական ։
3. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Աննա, Սեմյոն և Խաչատուր Շալապիններին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

22.01.2024

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ X Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի
2024 թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«22» հունվարի 2024 **թվականի** N 117-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի 1-ին ենթակետի <<դ>> պարբերությամբ, 7-րդ կետի 1-ին ենթակետի <<ա>> և <<բ>> պարբերություններով, 12-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ>> համայնքային կառավարչական հիմնարկի կարիքների համար էլեկտրոնային աճուրդի միջոցով գրենական պիտույքների և տնտեսական ապրանքների ձեռքբերման նպատակով սահմանել՝

1) պատասխանատու ստորաբաժանում հետևյալ կազմով՝

ա. Արամ Շաքոյան – համայնքի ղեկավարի օգնական,
բ. Սամսոն Կարապետյան - համայնքապետարանի աշխատակազմի տնտեսվար,

2) գնումների համակարգող՝ Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ Արմինե Սարգսյան:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առաջին կետում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**2024թ. ք. Գյումրի** **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


## Ո Ր Ո Շ Ու Մ

«22» հունվարի 2024 թվականի N 116-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 08-Ի N 2270-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի սեպտեմբերի 08-ի <<Քաղաքացի Խանում Միսակի Արշակյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Ֆուրմանովի փողոց 1-ին նրբանցք N 8 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 82,38 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները, ինքնակամ բացված 3(երեք) դուռը, ինքնակամ բացված 2(երկու) պատուհանը, ինքնակամ փակված 1(մեկ) պատուհանը օրինական ճանաչելու և օրինական հողամասին կից ավել օգտագործվող 4,78 քառակուսի մետր մակերեսով հողամասի կարգավիճակի մասին>> N 2270-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու անհրաժեշտություն է առաջացել, չափագրության մեջ տեղ գտած սխալի պատճառով (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի, գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 12/10/2023 թվականի N Կ-12102023-08-0167 որոշում): Ներկայացվել է նոր ճշտգրտված չափագրություն:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի սեպտեմբերի 08-ի <<Քաղաքացի Խանում Միսակի Արշակյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Ֆուրմանովի փողոց 1-ին նրբանցք N 8 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 82,38 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները, ինքնակամ բացված 3(երեք) դուռը, ինքնակամ բացված 2(երկու) պատուհանը, ինքնակամ փակված 1(մեկ) պատուհանը օրինական ճանաչելու և օրինական հողամասին կից ավել օգտագործվող 4,78 քառակուսի մետր մակերեսով հողամասի կարգավիճակի մասին>> N 2270-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) վերնագրում,նախաբանում,որոշման 2-րդ կետում <<82,38(ութսուներկու ամբողջ երեսունութ հարյուրերորդական)>> թիվը և բառերը փոխարինել <<93,03(իննսուներեք ամբողջ երեք հարյուրերորդական)>> թվով և բառերով:

22.01.2024

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«22» հունվարի 2024 թվականի N 115-Ն

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՈՒՂԻ 53/4 ՀԱՍՑԵԻ ԽԱՆՈՒԹԻՆ ԿԻՑ 16.84 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ, ՆՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 16.84 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (13.52 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԽԱՆՈՒԹԻ ՀԱՏՎԱԾԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Երևանյան խճուղի 53/4 հասցեի խանութին կից. 16.84(տասնվեց ամբողջ ութսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված է 16.84(տասնվեց ամբողջ ութսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (13.52 (տասներեք ամբողջ հիսուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով խանութի հատված, որը տիրապետում և օգտագործում է քաղաքացի Վահան Սահակյանը:

Նկատի ունենալով, որ շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի, թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի, 4-րդ բաժնի 33-րդ կետի, հիմք ընդունելով ինքնակամ կառույցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող 20236ZZLHA ծածկագիրը՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Գյումրի քաղաքի Երևանյան խճուղի 53/4 հասցեի խանութին կից 16.84(տասնվեց ամբողջ ութսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված 16.84(տասնվեց ամբողջ ութսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (13.52 (տասներեք ամբողջ հիսուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով խանութի հատվածը համարել համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված շինությունը և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Վահան Սահակյանին:
3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը (պատասխանատու՝ քաղաքաշինության և ճարտարապետության բաժին):
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024 թ. ք.Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«22» հունվարի 2024 թվականի N 114-Ա

## ՔԱՂԱՔԱՑԻ ԳՐԻԳՈՐ ԱՇՈՏԻ ՋԱՒՄՑՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԿՆՈՒՆՅԱՆՑ ՓՈՂՈՑ N 76 ՀԱՍՑԵԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 140,73 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 16.26 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Գրիգոր Աշոտի Ջաիմցյանին ժառանգության իրավունքով պատկանող (հիմք՝ ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիր գրանցված գրանցամատյանում 29.11.2023 թվականի N 8743) Գյումրի քաղաքի Կնունյանց փողոց N 76 հասցեի տան օրինական հողամասին կից ավել օգտագործում է 16,26 (տասնվեց ամբողջ քսանվեց հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամաս, որի վրա առկա շինությունները կառուցված են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և սեփական հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը ինքնակամ կառուցվել է 127,05 (մեկ հարյուր քսանյոթ ամբողջ հինգ հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններ, իսկ 2001 թվականի մայիսի 15-ից հետո ինքնակամ կառուցվել է 16,02 (տասնվեց ամբողջ երկու հարյուրերրորդական) քառակուսի մետր արտաքին (13,68 (տասներեք ամբողջ վաթսունութ հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի շինություններ:

Քաղաքացի Գրիգոր Աշոտի Ջաիմցյանի լիազորված անձ Եսայի Վարդանյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ նշված հողամասի և սեփական հողամասում ինքնակամ կառուցված բնակելի շինությունների նկատմամբ իր սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ տունը չի գտնվում հողային օրենսգրքի 60- րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, ղեկավարվելով քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերով, <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22 և 22.1 կետերի, հիմք ընդունելով քաղաքացի Գրիգոր Աշոտի Ջաիմցյանի լիազորված անձ Եսայի Վարդանյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի դեկտեմբերի 22-ին N 27620 թվագրմամբ)՝ և հիմք ընդունելով ինքնակամ կառույցը կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հաստատող 2023ZGW3AA ծանուցագիրը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Ճանաչել քաղաքացի Գրիգոր Աշոտի Ջաիմցյանի (ծնված 1971 թվականի հուլիսի 31-ին) սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Կնունյանց փողոց N 76 հասցեի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվող 16.26 (տասնվեց ամբողջ քսանվեց հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի և նրա վրա առկա շինությունների նկատմամբ:

2. Քաղաքացի Գրիգոր Աշոտի Ջահմցյանին պատկանող Գյումրի քաղաքի Կնունյանց փողոց N 76 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 140,73 (մեկ հարյուր քառասուն ամբողջ յոթանասուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները ճանաչել օրինական, 43654 տեղական բյուջե ենթակա է գանձման (քառասուներեք հազար վեց հարյուր հիսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Գրիգոր Աշոտի Ջահմցյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

4. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի
2024 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

ՈՐՈՇՈՒՄ

«22» նոյեմբերի 2024 թվականի N 113-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՓՈՂՈՑ N 173 ՀԱՍՑԵԻ 18,4 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (12,56 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ, 18,4 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՔԱՂԱՔԱՑԻ ՄԻՍԱԿ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Մյասնիկյան փողոց N 173 հասցեի 18,4 (տասնութ ամբողջ չորս տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասով բնակելի շինությունը հանդիսանում է համայնքային սեփականություն (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 24112023-08-0005 վկայական):

Նկատի ունենալով, որ նշված շինությունը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի վրա, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի ,ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 13-ի N 266-Ա որոշումը, քաղաքացի Միսակ Մարտիրոսյանի լիազորված անձ Արմեն Խոցանյանի դիմումը ՝ (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի մայիսի 25-ին N 10091 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաքի Մյասնիկյան փողոց N 173 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված 18,4 (տասնութ ամբողջ չորս տասնորդական) քառակուսի մետր արտաքին (12,56 (տասներկու ամբողջ հիսունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի շինությունը 150420 (մեկ հարյուր հիսուն հազար չորս հարյուր քսան) Հայաստանի Հանրապետության դրամ, ուղղակի վաճառքի միջոցով օտարել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Միսակ Մարտիրոսյանին:
2. Գյումրի քաղաքի Մյասնիկյան փողոց N 173 հասցեի 18,4(տասնութ ամբողջ չորս տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը, տվյալ հողամասի կադաստրային գնի չափով, որը կազմում է 10514 (տասը հազար հինգ հարյուր տասնչորս) Հայաստանի Հանրապետության դրամ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 193458 (մեկ հարյուր իննսուներեք հազար չորս հարյուր հիսունութ) Հայաստանի Հանրապետության դրամ, ուղղակի վաճառքի միջոցով օտարել քաղաքացի Միսակ Մարտիրոսյանին:
3. Գույքի օտարման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի որոշումը կայացնելուց հետո, քաղաքացի Միսակ Մարտիրոսյանը պարտավոր է 60 օրվա ընթացքում կատարել վճարումներ:
4. Առուվաճառքի հետ կապված պայմանագրի նոտարական վավերացման և պետական գրանցման ծախսերը կատարել քաղաքացի Միսակ Մարտիրոսյանի միջոցների հաշվին:

5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում քաղաքացի Միսակ Մարտիրոսյանին պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**ք.Գյումրի**
**2024 թ.**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«22» [illegible] 2024 թվականի N 112-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԹԲԻԼԻՍՅԱՆ ԽՃՈՒՂՈՒ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ 364,11 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔՆԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 112,32 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ, ( 78,37 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ՊԱՀԵՍՏԸ ԵՎ ՇՎԱՔԱՐԱՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

364,11(երեք հարյուր վաթսունչորս ամբողջ
Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղու հարևանությամբ համայնքապատկան հողամասում
տասնըմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով երեսուներկու հարյուրերորդական )
ինքնակամ կառուցված է 112,32 (մեկ հարյուր տասներկու ամբողջ հարյուրերորդական)
քառակուսի մետր արտաքին 78,37 (յոթանասունութ ամբողջ երեսունյոթ
քառակուսի մետր ներքին մակերեսով պահեստ և շվաքարան:
Նկատի ունենալով, որ շինության պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով
պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի գտնվում
Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային
Ստեփանյանօբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական
նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, համաձայն Հայաստանի
Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաս*տատված
կարգի 2-րդ կետի, թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի, 4-րդ բաժնի 33-րդ կետի,
ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ
կետով`, որը կադաստրի կոմիտեում հաշվառված է` 2023MUKBAF ծածկագրով:

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղու հարևանությամբ 364,11(երեք հարյուր վաթսունչորս ամբողջ տասնըմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 112,32 (մեկ հարյուր տասներկու ամբողջ երեսուներկու հարյուրերորդական ) քառակուսի մետր արտաքին 78,37 (յոթանասունութ ամբողջ երեսունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով պահեստը և շվաքարանը համարել համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական
2. Սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված շինությունը և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Ալվարդ Աշոտի Սահակյանին:
3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը (պատասխանատու` քաղաքաշինության և հողօգտագործման բաժին):
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ` Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

**ք.Գյումրի**
**2024 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«22» հունվարի 2024 թվականի N 111-Ա

**ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՆՈՐԱՅՐ ՍԵՐԳԵՅԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ (1/3 ՄԱՍ), ԺՈՐԱ ՍԵՐԳԵՅԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ (1/3 ՄԱՍ) ԵՎ ԱՐԱՄ ՍԵՐԳԵՅԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ (1/3 ՄԱՍ) ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՏԵՔՍՏԻԼԱԳՈՐԾՆԵՐԻ ՓՈՂՈՑԻ N 22 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 185.08 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 36.67 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ**

Քաղաքացիներ Նորայր Սերգեյի Մանուկյանին (1/3 մաս), Ժորա Սերգեյի Մանուկյանին (1/3 մաս) և Արամ Սերգեյի Մանուկյանին (1/3 մաս) ժառանգության իրավունքով պատկանող (հիմք՝ սեփականության վկայագիր N 020667, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր, տրված 2017 թվականի հոկտեմբերի 04-ին N 6759, 6760, 6761) Գյումրի քաղաքի Տեքստիլագործների փողոցի N 22 հասցեի բնակելի տան օրինական հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը ինքնակամ կառուցված է 185.08 (մեկ հարյուր ութսունհինգ ամբողջ ութ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններ և օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 36.67 (երեսունվեց ամբողջ վաթսունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով սահմանազատված հողամաս, որի վրա առկա շինությունները կառուցված են մինչև 2023XSYARK և N 2023TB2ENF ծածկագրերով:

Քաղաքացի Նորայր Սերգեյի Մանուկյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին նշված հողամասի և շինությունների նկատմամբ իրենց սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:

